



1/14. 1/3849-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

05/5689-16

Հ Ր Ա Մ Ա Ն № 318-ՆԿ

ք.երևան

<02> 04 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԱԾԽԱՏԱՆՔԻ ԲԱԾԽՈՒՄԸ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N885-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 72-րդ հոդվածով և ՀՀ կառավարության
2016 թվականի մարտի 3-ի N259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով
հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ)
կանոնադրության 16-րդ կետի 4-րդ և 22-րդ ենթակետերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել ՀՀ ԱԻՆ համակարգի ստորաբաժանումների և
կազմակերպությունների համակարգման իրավասությունները (աշխատանքների
բաշխումը) համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված հավելվածով վերապահված
իրավասությունների (աշխատանքների) կատարումն ապահովելու նպատակով
պաշտոնատար անձինք՝

1) կազմում են տարեկան միջոցառումների (անհատական աշխատանքային) պլաններ և մինչև նախորդող տարվա դեկտեմբերի 20-ը (2016 թվականի համար՝ մինչև ս/թ ապրիլի 20-ը) ներկայացնում են իմ հաստատմանը.

2) հանձնարարականներ են տալիս իրենց համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների ղեկավարներին.

3) յուրաքանչյուր եռամսյակի ավարտին հաջորդող ամսվա 10-ը ներկայացնում են հաշվետվություն՝ սույն հրամանի 1-ին կետով սահմանված իրավասությունների (աշխատանքների) և սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պլաններում ընդգրկված միջոցառումների կատարման վերաբերյալ:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի ՀՀայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների և կազմակերպությունների համակարգման իրավասություններ, ըստ գործունեության ոլորտների, սահմանելու և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2010 թվականի մարտի 11-ի N105-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N885-Ա հրամանը:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ա.Երիցյան

ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՇԽՈՒՄ)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարի (այսուհետ՝ Նախարար) տեղակալ Հ. Մխիթարյանը համակարգում և կազմակերպում է՝

1) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության գործունեությունը,

2) Սեյսմիկ պաշտպանության բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՊՈԱԿ) գործունեությունը,

3) «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի Լուսակերտ ուսումնական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացումը և ուսումնական գործընթացների կազմակերպումը.

4) ՀՀ ԱԻՆ կողմից լիցենզիաների տրամադրման ու ՀՀ ԱԻՆ աշխատակազմի Լիցենզավորման և հավատարմագրման գործակալության գործունեությունը.

5) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների նախագծերի մշակումը, ինչպես նաև ապահովում է դրանց ներկայացումը շահագրգիռ պետական մարմիններին,

2. Նախարարի տեղակալ Դ. Կարապետյանը համակարգում և կազմակերպում է՝

1) «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի գործունեությունը.

2) «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը.

3) «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ՓԲԸ) գործունեությունը.

4) կազմակերպում է սպորտային միջոցառումների անցկացումը:

3. Նախարարի տեղակալ Հ. Հակոբյանը համակարգում և կազմակերպում է՝

1) ֆինանսատնտեսագիտական ուղղությամբ իրականացվող աշխատանքները և գործունեությունը.

2) ՀՀ ԱԻՆ բողոքարկման հանձնաժողովի գործունեությունը.

3) <<Տեղեկատվական ապահովման և ազդարարման կենտրոն>> ՓԲԸ գործունեությունը:

4. Սույն հավելվածի 1-ից 3-րդ կետերում նշված պաշտոնատար անձինք՝

1) նշված կետերում չթվարկված ստորաբաժանումներին, կազմակերպություններին հանձնարարականներ և կարգադրություններ են տալիս, հաշվետվություններ կամ այլ տեղեկություններ են պահանջում Նախարարի միջոցով.

2) իրենց համակարգման ոլորտում չգտնվող ստորաբաժանումներին, կազմակերպություններին (իրենց չվերապահված աշխատանքների ուղղությամբ) հանձնարարականներ և կարգադրություններ են տալիս, հաշվետվություններ կամ այլ տեղեկություններ են պահանջում Նախարարի կամ համապատասխան համակարգող պաշտոնատար անձի միջոցով: